

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**<<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈԴՎԱԾ 1. <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ պարբերությունում <<երեք տարի հետո:>> բառերը փոխարինել <<երեք տարի հետո, եթե քաղաքացիական ծառայողն անընդմեջ զբաղեցրել է քաղաքացիական ծառայության պաշտոն:>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ մասով.

<<2.2. Հայաստանի Հանրապետության նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի, Հայաստանի Հանրապետության մարզպետարանի, Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմնի աշխատակազում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և աուդիտորներին պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է մարմնի ղեկավարը.>>.

2) 3.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3.1. Քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնում առանց մրցույթի նշանակվում է քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու գործող հավաստագիր ունեցող անձը>>:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2-րդ մասով.

<<3.2 Քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոնում առանց հավաստագրի նշանակում կարող է կատարվել նաև սույն օրենքի 12²-րդ հոդվածով և 29-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում.>>.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.3-րդ մասով.

<<3.3. Հավաստագիր ունեցող քաղաքացիների ցուցակը վարում է քաղաքացիական ծառայության խորհուրդը: Յուրաքանչյուր թեստավորումից հետո քաղաքացիական ծառայության խորհուրդը հինգ աշխատանքային օրվա ընթացքում հավաստագիր ստացած քաղաքացիների տվյալները տեղադրում է քաղաքացիական ծառայության խորհրդի պաշտոնական ինտերնետային կայքում:>>:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 19-րդ հոդվածի 10-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Փաստաթղթային ատեստավորման ենթակա են այն քաղաքացիական ծառայողները, ովքեր ունեն զբաղեցրած պաշտոնի ենթախմբի համար սույն օրենքով նախատեսված ավելի բարձր քաղաքացիական ծառայության դասային աստիճան կամ քաղաքացիական ծառայության նույն պաշտոնն զբաղեցնելու ընթացքում ատեստավորվել են:>>:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <<և հատուկ>> բառերը փոխարինել <<կամ հատուկ>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 32-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

<<7. Սույն հոդվածի 1-ին կետի <<ե>> ենթակետով նախատեսված հիմքով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված անձն զբաղեցրած պաշտոնից ազատվելուց հետո մեկ տարվա ընթացքում իրավունք չունի մասնակցել

նույն քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին կամ օրենքով սահմանված այլ կարգով զբաղեցնել այդ պաշտոնը:»>:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 32.1-ին հոդվածով.

<<Հոդված 32.1. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և աուդիտորների նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժերի կիրառման առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետության նախարարության, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմնի, Հայաստանի Հանրապետության մարզպետարանի, Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմնի աշխատակազում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և աուդիտորների նկատմամբ սույն օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված խրախուսանքները և 32-րդ հոդվածով նախատեսված կարգապահական տույժերը, բացառությամբ սույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի <<զ>> ենթակետով նախատեսված կարգապահական տույժի, սահմանված կարգով կիրառում է մարմնի ղեկավարը:»>:

ՀՈԴՎԱԾ 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: